

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Բաց Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am

Հաշվետվություն թիվ 06, 05.06.2018թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,760,731 հատ,	140,000 հատ	920.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2018 թվականի հունիսի 05-ի թիվ 18/01 Լ-Հ որոշում, (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):



ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102-18/01L-Հ

Դաս: ԾԳ

Ամսաթիվ: «05» հունիսի 2018թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ


Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱՔԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21⁶-ի 1-ին մասի ժգ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետությունում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Թողարկել արժեկտրոնային պարտատոմսեր Ծրագրային ազդագրի (ՀՀ ԿԲ նախագահի 23.05.2018թ. N 1/356Ա որոշմամբ գրանցված) հիման վրա՝ 3,000,000 (երեք միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 120,000 (հարյուր քսան հազար) հատ, 51 (հիսունմեկ) ամիս մարման ժամկետով, տարեկան 5.25 (հինգ ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ:
2. Տեղաքաշխումն իրականացնել ուղղակի վաճառքի եղանակով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաքաշխումը սկսել 2018 թվականի հունիսի 11-ին ժամը 09:00-ին և ավարտել 2018 թվականի հուլիսի 4-ին ժամը 15:00-ին: Տեղաքաշխումն իրականացնել Ծրագրային ազդագրով սահմանված կարգով հաշվարկված ըստ օրերի վաճառքի գներով:
3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտը վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում դադարեցնել տեղաքաշխման գործընթացը:
4. Արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:
5. Պարտատոմսերի մարման փոխանցումը կատարել թողարկման օրվանից հաշվարկված 51 (հիսունմեկ) ամիս անց: Մարման գումարի փոխանցումը

	<p>Որոշում Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին</p>	<p>Կոդ: ՈՐԽՍ0102-18/01Լ-Ը Դաս: ԾԳ Ամսաթիվ: «05» հունիսի 2018թ.</p>
-----------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------

կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:

6. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 49/03Լ-Ը որոշմամբ հաստատված «Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝

Բարսեղ Բեգլարյան

*Գրանցվածք հեռք Քրիչ Է
Վ. Պյ*

